

տոս ի ձեզ, զի արժանի լինիջիք մտանել յերկնից յարքայութիւնս անդր: 43 Պատշաճ էր եւ ձեզ խնամել զնոցին որդիսն եւ զաշակերտսն, որ ըստ հոգեւոր բանին ըստ աստուածային ծննդեանն էին որդիք, առաջնորդք եւ վերակացուք ձեր ի տէր. թող թէ որ մարմնապէս իսկ էին նոցա ճետք, եւ հոգեւոր նոցին գործոց ոչ ինչ պակաս քան զհարսն իւրեանց:

44 Արդ ձեր թողեալ զԱստուած, եւ յիշեցուցէք զչարիսն ձեր զառաջինս, եւ լցեք զչափ մեղացն հարցն ձերոց: 45 Որ զի նոքա սպանին զհարսն սուրբս չարչարանաւք՝ վասն բարւոյն չկամելոյ լսել զաւգտակարն խրատ ի նոցանէն, եւ դուք զորդիս եւ զժառանգս եւ զգործակիցս եւ զնմանողս նոցին սպանէք, որք ոչ հաւանեալ գործոց մեղացն ձերոց, սուրբ մանուկն Յուսիկն զհայրապետն զաթոռակալն զվիճակակալն զվիճակին Թադէոսի առաքելոյն եւ զնորին նմանոյն Գրիգորի: 46 Եւ դուք զիրեական բարուցն բերէք զաւրինակն յանձինս ձեր, սպանութեանցն սովորութեանց զրկութիւնս. որպէս եւ նոքա անխրատք զիւրեանց զառաքեալսն կամ զմարգարէսն կոտորեցին, սոյնպէս եւ դուք ըստ նոցին արիւնակի կատարեցէք:

47 Արդ վասն այսչափ ստութեանց ձերոց եւ պղծութեանց, բարձցէ Տէր զթագաւորութիւնդ ձեր ի ձեւջ. բարձցէ եւ զքահանայութիւնդ ի ձեւջ: 48 Տրուեսջիք եւ բաժանեսջիք, եւ ցրուեսցին սահմանք ձեր որպէս եւ Իսրայէլ, եւ անտէրունչք եւ անխնայ եւ անխնամք լիջիք. եւ լիջիք դուք իբրեւ զխաշինք, զի ոչ գուցէ նոցա հովիւք: 49 Մատնեսջիք իբրեւ զհաւտ ի ձեռս զազանաց, եւ անկջիք ի փառաց ձերոց. եւ ի ձեռս աւտար թշնամեաց մատնեսջիք դուք ի գերութիւն եւ ի լուծ ծառայութեան, եւ ոչ բարձցի երբէք կամ պակասեսցէ լուծ ծառայութեան ի ձեւջ. եւ ոչ երբէք պակասեսցէ լուծ չար ստրկութեան ծառայութեանն ի պարանոցաց ձերոց. հաշեսջիք եւ մաշեսջիք ի ցանկութիւնս ձեր: 50 Որպէս պատառեցաւ Իսրայէլ, եւ ոչ կարկատեցաւ, սոյնպէս եւ դուք ցրուեսջիք եւ կործանեսջիք. եւ այլք վայելեսցեն ի վաստակս ձեր, եւ այլք կերիցեն<sup>1</sup> զաւրութիւնս ձեր. եւ ոչ ոք գտանիցի, որ փրկեսցէ զձեզ. եւ ոչ հաճեսցի ընդ ձեզ Տէր, եւ ոչ նայեսցի եւ ոչ փրկեսցէ այլ զձեզ:

51 Այլ զի կոչեցէք զիս ելանել զալ առ ձեզ, զա՛յս ամենայն կամէիք լսել դուք յինէն: 52 Եթէ իմ չէր զայս ամենայն պատմել<sup>2</sup> ձեզ, սակայն այս ամենայն լինելոց էր ձեզ վասն սպանման արդարոյն մեծին մանկանն Յուսկան առաքիւնոյն առաջնորդին ձերոյ, որ էր ի տանէն զաւակին Գրիգորոյ. զի այս ամենայն լինելոց է ձեզ, զի այսպէս եցոյց ինձ Տէր: 53 Այլ զի յղեցէքդ առ իս, եթէ ե՛կ կաց մեզ զլուխ եւ առաջնորդ, զհա՛րդ լինիցիմ առաջնորդ այնոցիկ՝ որք ոչ դառնայցեն զկնի Տեառն. կամ զհա՛րդ կայցեմ զլուխ ազգի, զորս ե-

1 *Յորին. միում* զվաստակս ձեր եւ զգորութիւն

2 *Յորին. միում* պատմեալ